



Գնային առաջարկ ներկայացնելու հրավեր

Վեոլիա Ջուր ՓԲԸ հրավիրում է համապատասխան և իրավասու կազմակերպություններին ներկայացնելու գնային առաջարկ՝ ներառյալ հարկերը, կահույքի մատակարարման համար:

Պահանջներ՝

1. Գնային առաջարկի հետ մեկտեղ պետք է ներկայացնել տեղեկատվություն նախկինում կատարած պայմանագրերի վերաբերյալ, կատալոգները և այլ տպագրական նյութեր առաջարկվող կահույքի վերաբերյալ:

2. Առաջարկվող կահույքը պետք է պատրաստված լինի գործող պետական ստանդարտներին, տեխնիկական շահագործման, առողջության, անվտանգության, սանիտարական կանոններին և այլ նորմատիվ փաստաթղթերին համապատասխան:

3. Մատակարարումը պետք է իրականացվի «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի գրասենյակներ՝ առանձին պատվերների հիման վրա՝ նախապես համաձայնեցված ժամկետներում: Վճարումը կկատարվի փաստացի մատակարարված ապրանքների դիմաց: Այլ վճարման պայմաններով առաջարկները կմերժվեն:

4. Ընդունելի է այլընտրանքային տարբերակների ներկայացումը մեկ հայտի շրջանակում:

5. Գնային առաջարկների գնահատումը կիրականացվի առանց ԱԱՀ-ի մասնաբաժնի:

6. Ընտրված մասնակցի կամ մասնակիցների հետ կկնքվի միավոր գնի շրջանակային համաձայնագիր մեկ տարի տևողությամբ:

7. Սույն գնմանը մասնակցելու իրավունք չունեն անձինք.

- որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ դատական կարգով ձանաչվել են սնանկ,
- որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեն ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով,
- որոնց գործադիր մարմնի ներկայացուցիչը հայտը ներկայացնելու օրվան նախորդող երեք տարիների ընթացքում դատապարտված է եղել տնտեսական գործունեության կամ պետական ծառայության դեմ ուղղված հանցագործության համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դատվածությունը օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված է,

- որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Որպես պայմանագրի ստորագրման նախապայման պայմանագիր շնորհված ընկերությունը պետք է ներկայացնի ընկերության գրանցման վկայականը և հարկային մարմնի կողմից վավերացված տեղեկանք հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով ժամկետանց պարտքերի բացակայության վերաբերյալ:

Հետաքրքրվող ընկերությունները կարող են գնային առաջարկի ներկայացման ձևի վերաբերյալ տեղեկություններ ստանալ Վեոլիա Ջուր ՓԲԸ-ից աշխատանքային օրերին ժամը 09.00-13.00 և 14.00-18.00: Գնային առաջարկները պետք է ներկայացվեն ստորագրված, կնքված և փակ ծրարով կամ էլեկտրոնային եղանակով ոչ ուշ, քան 2018թ. մարտի 28-ը, ժամը 15:00`ստորև նշված հասցեում`

ՀՀ, ք. Երևան, 0014, Ադոնցի 6/1, Վեոլիա Ջուր ՓԲԸ, 9-րդ հարկ, Գնումների վարչություն: Հեռ.՝ (374 11) 54-26-95, էլ. փոստ՝ aytsemnik.martirosyan@veolia.com: